Ասաց. «Քե կ'խեծնեմ»։

Ասաց. «Քե կ'տամ էրեգական կ'խաշեմ»։

Ասաց. «Ծովային եմ, ձի[1]) կ'տամ քեռ փորի տակ».

Որ կ'տար էրեգական խաշէր, էտու փորի տակ. որ կ'տար էրթար յանդիւդ, ինք էտու քամակ։

Ասաց. «Ես քեռ ձին, դիւ իմ տէր. դիւ նեղացած կ'ըլնիս, էրթանք էնդի մի ջիւր խմի, ռահաթի»։

Գնաց, տեսաւ մի կուռ էնդեղ էր. էրկու ղիտր բամբակ դրից մէջ, դրից գլոխ, չ'կայնից. մէ մէջկապ էնդեղ էր, եօթ փաթ էրե բոլոր մէջաց, չկայնից. մէ ջուխտ կոնդրայ, մէ մէ ղիտր բամբակ դրից, խագաւ՝ հալա ճոչ էր. չփէհմաւ, որ ջիւր խմէր, քնէր։ Ջիւր խմից, քնից. քնից մէ քիչ, Աստծոյ շնորք առից. վէր էլաւ, էրկու ղիտր բամբակ խանից կունդրէքաց, խագաւ,—էնդուր ոտով, մէջկապ մէջքով, կուռ գլխով։ Էլաւ ձին խեծաւ, բաղչով կ'էրթար, մէկ էլ տեսաւ ծովու իրիս։

Բաղդասար անսաւ, որ մի սար էլիր ա սարի վերայ, ասաց. «Էրթար, կռապաշտ թագաւոր ինձ մատղէր, աղէկ էր, քան էս ջանավար ինձ ուտէր»։

Սանասար ասաց. «Ի՞նչի լաց կ'ըլնիս»։

Ասաց. «Ես լաց չ'իլնիմ, բա ո՞վ տի լաց ըլնի. մէ աղբէր կար, ինք թալից ծով. կռապաշտ թագաւորն էլ ինձ պիտի մատղի»։

Սանասար ասաց. «Ես քեռ աղբէրն իմ, լաց մ'ըլնի. Աստուծով էն չի կարայ մէ մատղի»։

Էկան, թագաւորին տեսան։ Թագաւոր ասաց. «Ճան լակոտներ, ի՞նչի շիւտ չ'էկաք»։

Բաղդասար ասաց. «Որ մեր մօրէն ծնուիր ինք, ախշար չենք տեսեր, ախշար տեսանք՝ մռռացանք»։

Ասաց. «Արիք ձեզ մատղեմ»։

«Մեզ վէր դիր, մատղէ»։

Կռապաշտ թագաւոր վախայաւ, ձեռ չ'էտու։ Բաղդասար էկաւ,

---

[1]) Ինձ։